

## «Կենսաքիմիայի» լաբորատորիա

Կենսաբանության ֆակուլտետում կենսաքիմիայի ամբիոնի բացումից կարճ ժամանակ անց (1963 թ.) ամբիոնի հիմքի վրա կազմավորվել է տեխնիկական կենսաքիմիայի գիտահետազոտական լաբորատորիան, որի ուսումնասիրությունների հիմնական ուղղություն է հանդիսացել ազոտ պարունակող միացությունների փոխանակությունը (ամինաթթուներ, պեպտիդներ, սպիտակուցներ, ֆերմենտներ և այլն) տարբեր տաքսոնոմիական խմբերի միկրոօրգանիզմներում և բույսերում: Մաս-սպեկտրոմետրի օգնությամբ իրականացվել են նաև ազոտի N<sup>15</sup> ծանր իզոտոպով նշադրված ամինաթթուների էներգրավման ուսումնասիրություններ: 1963 թ-ից մինչև 1971 թ. Ապրիլ ամիսը լաբորատորիայի գիտական ղեկավարը եղել է ակադեմիկոս Մ. Ա. Տեր-Կարապետյանը, որից հետո մինչև 2004 թ-ը գիտական ղեկավարը եղել է ակադեմիկոս Մ. Ա. Դավթյանը:

Լաբորատորիան հետագայում վերանվանել է Համեմատական և էվոյուցիոն կենսաքիմիայի պրոբլեմային լաբորատորիայի: Լաբորատորիայի աշխատակիցների հետազոտությունները նվիրված են էվոյուցիոն զարգացման տարբեր աստիճանի վրա գտնվող օրգանիզմներում ազոտ պարունակող միացությունների փոխանակությունը: Մասնավորապես, ուսումնասիրվել են խմորասնկերի, բակտերիաների, բակտերիաների, թռչունների, կաթնասունների և մի շարք նբույսերի ամինաթթվային փոխանակության որոշ ֆերմենտների արգինազի, ամինաթթվային օքսիդազների, տրանսամինազների մետաբոլիկ հատկանիշները:

Լաբորատորիայում իրականացվում են հետազոտություններ տարբեր էքստրեմալ վիճակները նյութփոխանակության բացահայտման ուղղությամբ համեմատական էվոյուցիոն տեսակետից:

2015թ. լաբորատորիան անվանափոխվել է, այժմ «կենսաբանություն» գիտահետազոտական ինստիտուտի կազմում է, կոչվում է կենսաքիմիայի լաբորատորիա: Գիտական ղեկավարն է կենս. Գիտ. դոկտոր, պրոֆեսոր Լ. Ն. Նավասարդյանը: